

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ  
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

**ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԱՀԻՏ**

ԳՊՀ դասախոս

e-mail: ahakobyan@inbox.ru

**Հոդվածում ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում սոցիալական փաթեթի ներդրման անհրաժեշտությունը, նպատակները, կիրառման ընթացքում բացահայտված դրական ու բացասական երևույթները, ինչպես նաև սոցիալական փաթեթի շրջանակում իրականացվող ծառայությունների հետագա զարգացման և բարելավման միտումները: Ներկայացվել է տեղեկատվություն իրականացվող ծառայությունների վերաբերյալ՝ սկսած ներդրման պահից, բացահայտվել են օրենսդրական դաշտում կատարված փոփոխությունները՝ մեկնաբանելով դրանց դրական ազդեցությունը, ինչպես նաև սոցիալական փաթեթի ներդրման դրական և խթանող ներգործությունը մեր երկրում սոցիալական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ:**

**Վերլուծության արդյունքում արվել են առաջարկություններ՝ հիմնականում ուղղված կուրակային կարգով հավաքված և տվյալ բյուջեային տարվա ընթացքում չօգտագործված գումարներին: Քանի որ ներկայումս գործող օրենսդրության համաձայն շահառուն կարող է այդ գումարները օգտագործել հաջորդ տարիներին, ապա առաջարկվում է հնարավորություն ընձեռել, որպեսզի նրանք իրենց հանգիստը կարողանան կազմակերպել ոչ միայն Հայաստանում և Արցախում, այլ նաև արտասահմանում: Բացի դրանից՝ խիստ կարևոր ենք համարում նաև հանրապետությունում առողջապահական պարտադիր բժշկական ապահովագրության կիրառման հնարավորինս ընդլայնումը՝ ընդգրկվող շահառուների առումով:**

**Բանալի բառեր՝** սոցիալական փաթեթ, շահառու, կուրակված միջոցներ, պարտադիր բժշկական ապահովագրություն, սոցիալական երաշխիքներ, հիփոթեքային վարկի ամսական մարումներ, բնակչության խոցելի խավեր:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացմանը զուգընթաց նկատելի են զարգացման միտումներ նաև

սոցիալական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Մեր երկրում վերջին տարիները նախանշված են որպես սոցիալական զարգացում ապահովող, որին մեծապես նպաստում են նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների որոշ խմբերին տրամադրվող սոցիալական փաթեթները: Սոցիալական փաթեթը համեմատաբար նոր ծրագիր է Հայաստանի Հանրապետությունում: Այն նպատակ ունի բարելավելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սոցիալ-տնտեսական վիճակը, նպաստել բնակչության խոցելի խավերի հնարավորությունների ընդլայնմանն ու նրանց սոցիալական երաշխիքների ապահովմանը, որն իր հերթին կհանգեցնի մարդկանց կենսամակարդակի բարձրացմանը: Սոցիալական փաթեթը պետական մարմինների, կրթության, մշակույթի, գիտության ու սոցիալական պաշտպանության ոլորտների, պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշխատողների և նրանց անմիջական ընտանիքների անդամների առողջական, կրթական և այլ խնդիրների ապահովման միջոցառումների համախումբ է՝ աշխատողների մոտիվացման և աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով:

ՀՀ սոցիալական փաթեթներն ունեն հստակ ռազմավարական նպատակներ՝ բավարարելու աշխատողների սոցիալական կարիքները, մոտիվացնելու ՀՀ բնակչությանը, բարձրացնելու աշխատանքի արդյունավետությունն ու պետական ոլորտի աշխատանքի գրավչությունը:

Հայաստանի Հանրապետությունում սոցիալական փաթեթը առաջին անգամ ներդրվեց 2012 թվականին, որը հնարավորություն ընձեռեց շուրջ 120 հազար աշխատակիցների, (քաղաքացիական և պետական ծառայողներին, պետական պաշտոններ զբաղեցնող անձանց, ինչպես նաև կրթության, մշակույթի և սոցիալական պաշտպանության ոլորտների, պետական կազմակերպությունների վարչական և մասնագիտական պաշտոններ զբաղեցնողների և նրանց անմիջական ընտանիքի անդամներին՝ անկախ զբաղեցրած պաշտոնից և վարձատրության չափից, հավասարաչափ օգտվել մի խումբ սոցիալական ծառայություններից, որը նպաստելու էր նրանց կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացմանը:

ՀՀ սոցիալական փաթեթներն ունեն հստակ ռազմավարական նպատակներ հետևյալ ուղղություններով՝

1. աշխատողների սոցիալական կարիքների բավարարում,
2. մոտիվացում և աշխատանքի արդյունավետության բարձրացում,
3. պետական ոլորտի աշխատանքի գրավչության բարձրացում,
4. պետական ոլորտում կադրերի հոսունության կրճատում:

Սոցիալական փաթեթներից օգտվելը հնարավորություն է տալիս շահառուներին ստանալու առողջության ապահովագրություն, հիփոթեքային վարկի ամսական վճարի մարում, ուսման վարձի վճար, հանգստի կազմակերպում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներում:

Սոցիալական փաթեթը՝ սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող անձանց կամ նրանց անմիջական ընտանիքների անդամների մասով շահառու են հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի № 1691-Ն որոշմամբ սահմանված սոցիալական փաթեթից օգտվելու իրավունք ունեցող անձինք<sup>1</sup>:

Շահառուն հնարավորություն ունի իր ցանկությամբ ընտրելու ցանկացած ապահովագրական ընկերություն: Շահառուն կարող է ընտրել ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող առողջության ապահովագրության ցանկացած փաթեթ, որի պայմանները պետք է բավարարեն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշմամբ սահմանված փաթեթների պահանջներին՝ անհրաժեշտության դեպքում լրավճարելով տարբերությունը<sup>2</sup>:

Ապահովագրական ընկերությունների ցանկը, այդ ընկերությունների կողմից առաջարկվող առողջության ապահովագրության փաթեթների օրինակելի ձևերը ՀՀ առողջապահության նախարարության դրական եզրակացությամբ հաստատվելուց հետո հրապարակվում են ՀՀ առողջապահության նախարարության կայքում<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ 2019 թվականից ծրագրի շահառուների շրջանակն ընդլայնվել է շուրջ 30.000-ով: Նշենք, որ սոցիալական փաթեթը հատկացվում է նաև շահառու մարմինների տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցներին, գիտությունների ազգային ակադեմիայի աշխատակազմի և նրան ենթակա ՊՈԱԿ-ների հաստիքացուցակներում ընդգրկված աշխատակիցներին, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող «ԽՍՀՄ» և ՀՀ «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ» պատվավոր կոչմանն արժանացած անձանց, Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտենի աշխատողներին՝ բացառությամբ ղեկավար աշխատակազմի (տնօրեն, տնօրենի տեղակալներ), որը հաստատված է «Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով»<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս, <http://www.mlsa.am/>

<sup>2</sup> Տե՛ս, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=81037>

<sup>3</sup> Տե՛ս, [http://moh.am/?section=static\\_pages/index&id=628&subID=57](http://moh.am/?section=static_pages/index&id=628&subID=57)

<sup>4</sup> Տե՛ս, <http://www.irttek.am/views/act.aspx?aid=150577>

Իրական շահառուների շրջանակն ավելի մեծ է, քանի որ փաթեթով նախատեսված որոշակի ծառայություններից հնարավորություն ունեն օգտվել նաև նրանց անմիջական ընտանիքի անդամները՝ ամուսինը և մինչև 27 տարեկանը լրացած նրանց հետ բնակվող զավակները:

Հարկ է նշել, որ սոցիալաթերի տված արտոնություններից չեն կարող օգտվել ՀՀ կենտրոնական բանկի, Երևանի քաղաքապետարանի և ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցները:

Բացի պետական մարմիններից՝ սոցիալական փաթեթում ներառված ծառայություններից կարող են օգտվել նաև կրթության, մշակույթի, գիտության և սոցիալական պաշտպանության ոլորտի ՊՈԱԿ-ների աշխատակիցները, նաև «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության այն աշխատակիցները, ովքեր աշխատում են առանձնապես ծանր կամ առանձնապես վնասակար պայմաններում<sup>1</sup>:

Եթե ՀՀ քաղաքացին աշխատել է վերոնշյալ պաշտոններից որևէ մեկում ոչ պակաս, քան 6 ամիս և ունի մինչև 6 ամսվա աշխատանքային ստաժ, ապա չի կարող համարվել սոց. փաթեթի շահառու:

Սոցիալական փաթեթից օգտվել չեն կարող նաև օրենքով սահմանված կարգով՝ հղիության և ծննդաբերության նպատակային արձակուրդի, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող նպատակային արձակուրդի, կադրերի ռեզերվում աշխատող և պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից վերադարձած անձինք<sup>2</sup>:

Անհրաժեշտ է նշել, որ աշխատողի դրույքի (աշխատաժամանակի) փոփոխման դեպքում սոցիալական փաթեթի գումարը չի փոխվում սոցիալական փաթեթի իրավունքի ծագման պահից հաշված մինչև մեկ օրացուցային տարին լրանալը:

Սոցիալական փաթեթի գաղափարը կարելի է համարել վերջին տասնամյակում կառավարության ամենահաջող ծրագիրը: Թեկուզ այն պատճառով, որ այն նախադեպը չունի միջազգային փորձի տեսանկյունից: Բազմաթիվ երկրներում կառավարություններն իրականացնում են քաղծառայողների սոցիալական աջակցության ծրագրեր, օրինակ՝ Ռուսաստանում կառավարությունը սուբսիդավորում է քաղծառայողների կողմից բնակարանի ձեռքբերման կամ կառուցման ծախսերի մի մասը: Սակայն նման փաթեթային առաջարկներ հայտնի չեն: Եվրոպայում առավել

<sup>1</sup> Տե՛ս, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150577>

<sup>2</sup> Տե՛ս, ՀՀ կառավարության որոշումը սոցիալական փաթեթի շահառուների առողջապահական փաթեթի շրջանակում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության եվ սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման, ինչպես նաև առողջապահական փաթեթի հասանելիության նպատակով էլեկտրոնային շտեմարանի ձեւավորման ու վարման կարգը հաստատելու մասին ՀՀ օրենք:

տարածված է պարտադիր բժշկական ապահովագրությունը բոլոր աշխատողների համար, սակայն ապահովագրական գումարի մի մասը, (կամ ամբողջը) վճարվում է ապահովագրվողի կողմից:

Փոփոխություններ են կատարվել սոցիալական փաթեթի հատկացման գործընթացում, և 2013 թվականից փաթեթը հատկացվում է առևտրային բանկերի միջոցով՝ սոցիալական փաթեթի գումարը փոխանցվում է աշխատողի՝ հատուկ այդ նպատակով բացված սոցիալական փաթեթի հաշվին, գումարները կրում են կուտակային բնույթ, իսկ կուտակված միջոցների վրա բանկերի կողմից առաջարկվում են նաև տոկոսադրույքներ, որտեղից կարող են փոխանցումներ կատարվել միայն սոցփաթեթի նախանշված ուղղություններով:

Պետական բյուջեից հատկացումները կատարվել են «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով՝ «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրում ընդգրկված պետական մարմինների համար: ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գանձապետական ստորաբաժանումներում բացվեցին գանձապետական հաշիվներ:

Առաջին տարում Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական բյուջեի միջոցներից սոցիալական փաթեթի համակարգին հատկացրեց 15.6 մլրդ դրամ, որից տվյալ տարում օգտագործվեց 12.1 մլրդ /հատկացված միջոցների 78%-ը/: 2014թ.-ին պետական բյուջեով սոցիալական փաթեթի համար նախատեսվել էր 17.559.833 հազ. դրամ, որի ճշտված պլանը սահմանվել էր 9.174.079,5 հազ. դրամ, իսկ փաստացի կատարողականը կազմել էր ճշտված պլանի միայն 74.5 %-ը:

2016 թվականին 2015թ.-ի համեմատ պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծախսերի գծով արձանագրվել է 18.6% անկում, ինչը հիմնականում պայմանավորված է տվյալ ծրագրից սրտի վիրահատությանը հատկացվող միջոցները «Սրտի վիրահատության ծառայություններ» ծրագիր տեղափոխելու հանգամանքով: Հաշվետու տարում 11.7 մլրդ դրամ է օգտագործվել մասնագիտացված հիվանդանոցային ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ կազմելով ծրագրի 99.5%-ը: 2015թ.-ի համեմատ նշված ծախսերն աճել են 28.8%-ով կամ ավելի քան 2.6 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է սրտի վիրահատությունների ծառայությունների ծախսերով, որտեղ համախմբվել են հիվանդանոցային որոշ ծրագրերում նախկինում ընդգրկված սրտի վիրահատության ծախսերը:

2017 թվականին պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի շրջանակներում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4729 «այլ նպաստներ» հոդվածով ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 10.9 մլրդ դրամ, իսկ 2018 և 2019 թվականների համար ՀՀ պետական բյուջեով պլանավորվել է փոքր- ինչ ավելի՝ նույն 10.619,496 հազ. դրամը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության N° 1691-Ն որոշման՝ յուրաքանչյուր աշխատակցին սոցիալական փաթեթով նախատեսված գումարը կազմում է ամսական 11 հազար դրամ, որը տարեկան կտրվածքով հավասար է 132.000 ՀՀ դրամ: Այս գումարից սոցիալական փաթեթի պարտադիր վճարը՝ առողջության ապահովագրության ծառայության համար սահմանված բազային ծածկույթը, կազմում է 52.000 դրամ, որի դիմաց ապահովագրական գումարը՝ 3.800.000 դրամ: Փաթեթը ներառում է հիվանդանոցային պայմաններում հատուցվող դեպքերի շրջանակը՝ սուր, անհետաձգելի և պլանային բուժօգնությունը, այդ թվում՝ սրտի հետ կապված առավել ծավալուն դեպքերի փոխհատուցումը (դեղապատ ստենդի, սրտի ռիթմը կարգավորող սարքերի, փականների պրոթեզների փոխհատուցում), ուռուցքաբանության ժամանակ կիրառվող վիրահատական բուժումը և սահմանափակ քանակությամբ ճառագայթային բուժումը և այլն:

Առողջության ապահովագրությունը հնարավորություն է տալիս խնայելու հիվանդությունների կանխարգելման, առողջության վերականգնման և պահպանման համար անհրաժեշտ գումարները, և պատահական չէ, որ այն դարձել է բժշկական ծառայությունների ծախսերի հատուցման քաղաքակիրթ աշխարհում առավել տարածված ձևը: Թեև մեր ազգաբնակչության մեջ դեռ ձևավորված չէ սեփական առողջության մասին հատկապես նախօրոք մտածելու մշակույթը, սակայն տարբեր հարցումները ցույց են տալիս, որ Հայաստանում մարդկանց համար ժամանակին բուժօգնություն ստանալու հիմնական խոչընդոտը ֆինանսական միջոցների պակասն է: Սոցիալական փաթեթով ապահովագրության փորձը ցույց տվեց, որ ապահովագրված շատ քաղաքացիներ վաղուց ունեին առողջական խնդիրներ, սակայն գումարի պատճառով չէին կարողանում հետևել իրենց առողջությանը: Այսօր բժշկական ծառայությունների գերակշռող մասը դարձել է վճարովի, իսկ առաջավոր տեխնոլոգիաների կիրառմանը զուգընթաց աճում են նաև դրանց գները:

Վարձու աշխատողների մի ստվար հատված 2012 թվականի՝ իրենց հատկացված սոցիալական փաթեթի գումարն ամբողջությամբ կամ մասնակի ուղղել էին բուժապահովագրությանը՝ չհաշված պարտադիր

բուժապահովագրությունը: 2013 թվականին նախորդ տարվա համեմատ նվազեց նրանց թիվը: Հետագա տարիներին նույնպես շարունակեց նվազել այդ շահառուների թիվը, որոնք սոցիալական փաթեթի գումարն ամբողջությամբ (132 հազ. դրամը) ուղղել էին բուժապահովագրությանը: Սոցիալական փաթեթի միջոցով կատարված 132 հազ. դրամի հատկացման մինչև 72000 դրամը շահառուն կարող է օգտագործել հանգստի, ուսման վարձի կամ հիփոթեքային վարկի մարման նպատակներով:

Սոցիալական փաթեթի շրջանակում ՀՀ պետական բյուջեից կատարվել են հատկացումներ հիփոթեքային վարկի ամսական մարումների փոխհատուցման գծով: Այս հատկացումները թեև իրենց տեսակարար կշռով էական դեր դեռևս չունեն, սակայն կարող են քաղաքացիների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման և բարեկեցության ապահովման նախապայման դառնալ:

Սոցիալական փաթեթի շրջանակում ՀՀ պետական բյուջեից կատարվել են հատկացումներ նաև ուսման վարձի փոխհատուցման գծով: 2012 թվականին ուսման ծախսերի փոխհատուցման վճարը կազմեց ընդհանուր գումարի 7.8%-ը, որը հետագայում աճել է, սակայն աննշան: Չնայած դրան՝ ուսման վճարի փոխհատուցման այս հնարավորությունը որոշակի դեր և նշանակություն ունի, քանի որ հայ ժողովուրդը մշտապես արժևորել է ուսումն ու կրթությունը:

Սոցիալական փաթեթի չորրորդ տարրը հանգստի ապահովումն է Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում: Շահառուների կողմից կտրուկ աճել է սոցիալական փաթեթի շրջանակում հանգստի ապահովմանն ուղղվող գումարների չափը և՛ բացարձակ, և՛ հարաբերական առումով (2012թ. այն կազմել էր հատկացված գումարի 7.6 %-ը, որը 2013թ.-ին կազմեց 10.24 %-ը): Սոցիալական փաթեթի միջոցներով շահառուները միջինում հատկացնում են 60-65 հազ. դրամ, որը նպաստել է նաև հանրապետությունում ներքին զբոսաշրջության զարգացմանը:

Հետևաբար, սոցիալական փաթեթի ներդրումը լուրջ խթան դարձավ ներքին զբոսաշրջության զարգացման համար: Դա է վկայում նաև այն փաստը, որ հետագա տարիներին նույնպես, մասնավորապես 2017 թվականին, զբոսաշրջության մեջ ներգրավված շահառուների թիվը գրեթե կրկնապատկվել է:

Ողջունելի է այն փաստը, որ մեր կառավարության կողմից նախատեսվել է, որ այն ուսանողները, որոնք միաժամանակ սովորում և աշխատում են, հնարավորություն կունենան իրենց ստացած եկամտից վճարված եկամտային հարկի հաշվին մարել ուսման վարձը: Այստեղ

հիմնական տրամաբանությունն այն է, որ ուսման ծախսերի փոխհատուցման նպատակի համար միշտ կարելի է և անհրաժեշտ է կատարել ներդրումներ:

Կատարված ուսումնասիրության հիման վրա առաջարկվում է՝ քանի որ ներկայումս գործող օրենսդրության համաձայն շահառուն կարող է մեկ բյուջետային տարվա ընթացքում չօգտագործված գումարները կուտակել և դրանք օգտագործել հաջորդ բյուջետային տարում, ապա կարելի է հնարավորություն ընձեռել, որպեսզի նրանք իրենց հանգիստը կարողանան կազմակերպել նաև արտասահմանում:

Հանրապետությունում հնարավորինս ընդլայնել առողջապահական պարտադիր բժշկական ապահովագրության կիրառումը:

Եվ, ընդհանրապես, անհրաժեշտ է ընդլայնել սոցիալական աջակցության հասցեագրված նմանատիպ ծրագրերը:

### **Օգտագործված գրականություն**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 27.12.2012թ N1691-Ն որոշում:
2. Афанасьева Е.В.- Социальный пакет работников,- Россия, г. Новосибирск, 2016 г
3. Work Package- Review on innovation in social services in Europe Health, Education and Welfare 1: Literature review on innovation in social services in Europe (sectors of Health, Education and Welfare Services)- Report May 2012
4. Michael Haskins- The development and improvement of the social packages in international concep
5. <http://www.mlsa.am>-ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:
6. <http://mineconomy.am>-ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն:
7. <http://www.edu.am/>-ՀՀ կրթության և գիտության նախարարություն:
8. <https://www.arlis.am>-Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ:
9. <http://moh.am>-ՀՀ առողջապահության նախարարություն:
10. minfin.am-ՀՀ ֆինանսների նախարարություն:



## TRENDS IN THE FURTHER DEVELOPMENT AND IMPROVEMENT OF SERVICES PROVIDED WITHIN THE SOCIAL PACKAGE

**HAKOBYAN ANAHIT**

*Lecturer, GSU*

The article presents the necessity, goals, objectives, as well as the positive and negative phenomena revealed during the implementation of social package in the Republic of Armenia, as well as the trends of further development and improvement of services provided within the social package. Social package has a considerable motivating impact. Information on the services provided, starting from the moment of introduction, as well as changes made in the legislation were presented, commenting on their positive impact, as well as the positive and stimulating impact of the implementation of social package on solving social problems in our country.

As a result of the analysis, recommendations were made mainly directed to funds collected and not used during one budget year. As the current legislation allows the beneficiaries to use the money in the future, it is suggested to enable them to organize their holidays not only in Armenia and Artsakh, but also abroad. In addition, we think that it is extremely important to maximize the use of compulsory health insurance in the Republic making it available to eligible beneficiaries.

**Key words:** *social package, beneficiary, accumulated funds, compulsory medical insurance, social guarantees, monthly mortgage loan repayments, vulnerable population.*

## ТЕНДЕНЦИИ ДАЛЬНЕЙШЕГО РАЗВИТИЯ И СОВЕРШЕНСТВОВАНИЯ УСЛУГ В РАМКАХ СОЦИАЛЬНОГО ПАКЕТА

**АКОПЯН АНАИТ**

*Преподаватель ГГУ*

В статье представлены необходимость, цели, реализации социального пакета в Республике Армения, а также тенденции дальнейшего развития и совершенствования услуг, предоставляемых в рамках социального пакета. Социальный пакет дает значительный мотивирующий эффект. Представлена информация о предоставляемых услугах, начиная с момента их введения, а также об изменениях в законодательной сфере, комментируется их положительное влияние, а также положительное и стимулирующее влияние внедрения социального пакета для решения социальных проблем в нашей стране.

В результате анализа были сделаны рекомендации в основном направленные на средства, собранные и не использованные в течение одного бюджетного года. Поскольку действующее законодательство позволяет бенефициару использовать деньги в ближайшие годы, предлагается дать им возможность организовать свой отпуск не только в Армении и Арцахе, но и за рубежом. Кроме того, мы считаем чрезвычайно важным, чтобы максимально использовать возможность внедрения обязательного медицинского страхования в Республике было доступно для многих бенефициаров.

**Ключевые слова:** *социальный пакет, бенефициар, накопленные средства, обязательное медицинское страхование, социальные гарантии, ежемесячные выплаты по ипотечным кредитам, уязвимое население.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 29.09.2019թ.:

Հոդվածը գրախոսվել է 18.10.2019թ.: